Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Յունիսի 27-ին. Թիֆլիս. № 26



**ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆ**

*Ներսիսեան ազգ. Հոգ. դպրոցի նոր շինութեան առթիւ*

Худож.-Лит. С. Быхова, Тифлисъ.

Կիմադրացոյն Բիւրօյի



Առեւտական տեղ, ուր միւսարն մարդկանց հետ շներն էլ են ծախւում և կաշառքի հետ ձևացւում է բկար անդրադարձարութիւնը.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

„ԽԱԹԱԲԱԼԱ“

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| կէս տարւանը » » » » 2 ր. 50 | կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Ré'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Յուլիսի 1-ից մինչև տարւայ վերջը «Խաթաբալան» արժէ 3 րուբլի, իսկ նաղդ՝ 2 ր. 50 կ.

Մեր կիսամեայ բաժանորդներից խնդրում ենք բաժանորդագինը շուտով ուղարկել, որպէս զի յուլիսի 1-ից թերթը կանոնաւոր հասցնենք իրենց։

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

Գրական, քաղաքական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական
ՕՐԱԹԵՐԹԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Առաջնորդող յօդւածներ, ներքին տեսութիւն, գաւառական կեանք, թղթակցութիւններ, քրօնիկ, արտաքին տեսութիւն, առեւտրա-արդիւնաբերական բաժին (բօրսա և այլն). աշխատաւորական կեանք (աշխատանքի բօրսա). մամուլ, թերթօն (գրական, քաղաքական, իրաւաբանական, մանկավարժական և այլն). Թատրոն և գեղարւեստ, մատենախօսութիւն, դատաստանական, նամակ խմբագրութեան, յայտարարութիւններ և տեղեկատու։

ՄԵՓԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳՐՆԵՐ

Օրաթերթը հրատարակւելու է յուլիսի 1-ից (նոր. տարւայ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ յուլիսի 1-ից մինչև տարւայ վերջը 4 րուբլի, 3 ամիսը 2 ր. 50 կ. ամիսը 1 ր.։ Արտասահմանի համար մինչև տարւայ վերջը 6 րուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція газеты «Сурандакъ»

Խմբագիր-հրատ. Աստ. Երիցեան.

Հրատարակիչ՝ Գէորգ Չիլինգարեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ ԵՒ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ.

## ՁԻՄ ԳԱՌՆԱՑ ԻՄ ԿԱԹՂԻԿՈՍ

Միր հոքեւոր Տէրը՝ Վեհափառն էլ գնաց։ Էս էրկու շաբթումը ախանդիխան ես էլ գնում էի Վանքի հայաթը, էնդղանց էլ սրփազանի սանդխեներով դիվիր էի բանցրանում Վեհի օթախները ու տնգած էի գնում, թէ ով է գալի, ինչ է ասում ու ինչ է ուզում։

Էսօր էսունց վրայ իմ ուզում խօսի,

Միղկս ինչ թաքցնիմ, միխկս էկաւ միր Կաթղիկուսը։

Հաղուրթը գլողենայ, ես խո հոքեւուրականներեմէն, չիմ, ես ուփրօ հայ քրիստոնյայ իմ, համա թէ վուր մէ վուխտ հաուց ակը վիկենայ ու ասի թէ՝ Գասպար Կալաստուզով, դուն պիտիս կաթղիկոս ըլիս հաուց ակի համա, ես էս բանը չէի դարուլ անի, չէի ընթունի. վուր ասէին թէ կնիկդ էլ հիգըդ ըլի, թաք կաթղիկոս կաց, էլի դարուլ չէի ըլի. վուր ասէին, թէ սուսայ կնգանեմէգ, կաթղիկոսանալու համա օրեկան հազար թուման էլ տնկուդ կուտանք ու էն էլ կէս տարւանը էսգլխեմէն, էլի, դարուլ չէի ըլի. վուր ոնւայ կնգանեմէս, տնկուղեմէս, էլի ուրիշ փառք ու պատիւ էլ խոստանային ու տային. վուր գիդենայի, թէ Համբարցում Առաքելովը, թէ ղեներալ Քիշմիշովը, գոխտուր Նուասարթովը, թէ Ջիւանի ադայ Գարեգինը, Երւանդ Լալայեովը, թէ միր Տէր-Գուտը օր ու գիշիր գուլուղշիքս կուլէին, ջամագիրները էլ չէին վիկալնի, խուսկիրս մարքրիտի հանգի կունթունէին, վուռնեըիս ակը փիանդազ կու փռէին, ղիփ արմաղան խորադնիր կուտեցնէին, էլի իմ ասում, էլի իմ կրդնում, Աստուած գիդենայ, դարուլ չէի կենայ, վուր հաուց ակի կաթղիկոս ըլիմ։

Համա էս ինչի։

Ինչ սաբաբ կայ, վուր ես էսենց իմ դառի։

Յօգիտ խօ չիմ դառի։

Վունց յօգիտ իմ դառի. վունց մօգիտ, վունց էլ մէ ուրիշ սաբաբ կայ, համա ես իմ ու իմ քէփը, չիմ ուզի, չիմ ուզի, վուր ջուրն էլ ննգնիք, էլի չիմ ուզի։

Համա հիմի հարցրէք, թէ ինչի չիմ ուզի։

Ջունքի միդեզնիր շատ կայ։

Ու ինչ թայիր թայիր միդեզնիր։

Տօ հէր օխնած հայիր, Աստուած գիդենայ, մինք մազալու մարթիք ինք, վունց խիլք ունինք, վունց նամուս ու վուր խիլք չունինք, էտ խօ վաղուցւայ ասակ է, համա վուր նամուսն էլ ինք կորցրի՝ էտ հիմի, հիմի իմ ասկութար աչկով տեհայ։

Մեղայ Աստու։

Աստուած թուղութիւն շնորհեցէ՛ ամէնու։

Ջի՞ թէ գիդում իք, թէ հանաք իմ անում, չէ՞ գեթաղւայ, ես էտ թաւուր խասիաթ չունիմ, իմ դուրթն էլ հանաք է, հանաքն էլ խօ հանաք է ու հանաք, համա սև թանաքի հանգի հանաք։

Համա էլի էնդու վրէն խօսինք։

Ինչի՞ չիմ ուզի գառնայ կաթողիկոս

Զունքի հայ ազգի մինձ փայը էս սահաթիս, էս սահաթիս չիմ գիդի, չիմ գիդի ինչի՞ համա, մէ քիչ վերի ատեժումը ափրած է, օթախները քրէնով է տալի. Թամամշավի քարւայի հանգը պաչինկա կուզէ. չունքի մեր ազգի մինձ փայու գիմնըրումը միակը, ուզում էնենց է խառնւի, կօսիս եարմաղա ըլի։ Ու էտ մինձ փայուն է հետարով մանում էս սահաթիս, թէ մեր խմբագրները, թէ ուսուցչականները, թէ օղորմածները ու թէ անգործները, թէ տուտակաները ու թէ դախտուրները, թէ վարժապետները, թէ վարթապետները, թէ քաղաքագլխները ու թէ գեղի վուտները, (գալուէքը) թէ իրեցփոխները ու թէ հոգեփործները ամենը, ամենը։

Հա, տա, իմ աչկով վուր չտեսնէի էտ ամէնը, իս չէի հաւատայ. համա չունքի դուք էլ տեսաք. իս էլ գիդիմ սիրեկների ջան, վուր էտ էսպէս է, ինչ կուտինք թէ վուր չասինք, ափսօս է թէ կի ասինք։

Մա՞չ։

Տօ անածակներ, օր ու գիշեր մէ գլուխ էն էիք ասում, թէ կաթողիկոսին սիրում ինք, կաթողիկոսին պատւում ինք, պաշտում ինք. բա թէ դա դուրթ է, բա էլ վո՞նց էլաւ, վուր ձեր լիզուները չը չորցաւ։

Վա՛յ, վա՛յ վա՛յ վա՛յ. վա՛յ իմ հոքուն, մեղայ Աստծու։

Տօ անպատկներ, ճառախօսներ, դուք ան հայ ազգի հիդ ինչ թշնամութին, ան հայ նորընծր կաթողիկոսի հիդ ինչ գէթ ունէիք, վուր էսենց անառվիստ չարչարանքի մատնեցիք մեր սիրելի Վեհափառ հոգեւոր տէրուչը։

Իա դուք Աստուծ ունի՞ք։

Ան վուր Աստուծ ունենաք, էսենց կու ժամ դայիք։

Ի՞նչ էիք անում, ամէն մէկդ վեր էիք կացի ու ինչ տուտուց-մուտուց բաներ յիշել իք. գրի վրէն գրել իք, իժում անդիր իք արի միակը չհասկացած ու վազում իք դրա կաթողիկոսը, ճամփը է վուր խօսում իք, տո տուցութիւնը է վուր ասում իք ու խիղճ կաթողիկոսն էլ, (աչքերեմէն մալում էր) լուում է լուում ու տանջւում, իփ վուր փիքր է անում, թէ էս ինչ աջարանդալութին է մեր կինքը դառի.

Ու ինչ իք ասում։

Անմիտկ, անխմաստ, անտակտ, անխիղճ, անյարմար, անշնորք խուսկիր ու խուսկիր ու սրամէն աւել տանջանք, սրամէն աւել նախատակութին։

Իփ վուր մարթս գիդենայ, թէ դիմացինը տուտուց է, խուսքերին շատ էլ սուր անդամ չի դնի, համա իփ վուր մարթս տեհնում է, վուր խօսողը միթամ խելուք է ու տուտուց-տուտուց անպրադօն դուս է տալի, հա սրա դրամէն աւել տանջանք չկայ մարթուս համա։

Ասում ին մեր մինձ Գրիգուր Լուսաւուրչին տասնուչուրս թասուր տանջանքնիր ա ին տասնուհինգ տարում։

Մինք, էս օրերում, օրեկան տասչուրս ջէր տասչուրս տանջանքնիր էինք շանց տալի մեր Կաթողիկոսին, մեր անխմաստ խուսկերով, անկապ մակերով, անտեղի տուաչարկութիններով, անվայել խորհուրթներով և այլն և այլն, վո՞նց վուր ասում ին դրափար լիզւով։

Սրամէն էլ լաւ տանջանք։

Ջահանդամը, Թիփլիզը լիքն է տուտուցներով, տօ ճամփին էլ, մինչկի Ղարաքլիսա, ինչ տիդ Կաթողիկոսին աղաք էկան, դիփ էլ տուտուց-տուտուց բանիր դուս ա ին, իլաքի Ղարաքլիսումը տանուտէրը ու էրենու տաշնութթը, վուր տուտուցների մուդ՝ ում պահելու համա լաւ էկզեմպլիար է

Հիմի դուք ասէք գեթադուայ, ամի, վուր իս, գլուխս հասուց ազգի համա դիմիչ անիմ, ափսուս, ափսուս վուր մեր մարքրիտ Իզմիրլեան Մաթէոսի պէս օրինաւուր կաթողիկոս ունինք, վուր լում է էգ օյինբազ ճառերը ու փառք իրեն, էլի խելուք խուսքեր ու ջուղարներ է տալի.

Զէ, իս չիմ կանայ էդգդամ համփիրի։

Խապար Կոլոտոզեանց

---

## ՕՐ. ԱՆՈՒՂԵՂԵԱՆՑԻՆ

Այգում նստած երբ տեսնում եմ,
Քո քայլւածքը նազանեմ,
Ափսոսում եմ, որ ազայ չեմ՝
Առնեմ տաքդ ու պաչեմ,
Ու բիւր անգամ երանի եմ
Տալիս. կո՛յս, այն պատանուն
Որը մի օր բաղդ կունենայ
Տիրել մատիդ մատանուն.
Բայց երբ յանկարծ իմ հայեացքը
Ընկնում է քո գլխարկին,
Ես ինքս իմ մէջ մտածում եմ՝
Արդեօք մ ի բ ա ն կ ա՞ յ տ ա կ ի ն։

Էլիֆաւտի

---

## Ի Ն Տ Ե Ր Վ Ի Ւ

Այս անգամ գնացի տեսնելու Բեգլար Ամիրջանին, որ մեր երգիչների մէջ պատուաւոր տեղ ու դիրք ունի և հայաերական թատրոնների էլ սրտախօս է։

—Թոյլ տւէք ինձ, պարոն Ամիրջան, մի քանի քաղաքական, հասարակական, գեղարվեստական, եկեղեցական, գիտաբեմական և թատրոնական, դրական և ֆինանսական հարցերի մասին տեղեկութիւններ առնել ձեզանից, որովհետև Պետերբուրգում ապրելով, հաւանական է և մօտիկ լինէք այդ բոլոր գործերի հետ, կարելի՞ է։

—Ինչու չէ, կարելի է։

—Դուք ինչ էք կարծում. մի՞թէ քաղաքական մթնոլորտը այսպէս կարող է շարունակել։

—Ես ոչինչ չեմ կարծում։

—Կարո՞ղ է պատահել, որ Պարսկաստանը կորցնէ իր ինքնուրոյնութիւնը։

—Կարող է պատահել։

—Բայց կարո՞ղ է պատահել, որ Շահը կամ յեղափոխականները ուժեղանալով թօթափեն իրենց Եւրոպայի լուծը։

—Կարող է պատահել։

—Հարկաւո՞ր է արդեօք պետութիւնը եկեղեցուց բաժանել. ինձ թւում է, որ դա անյարմար է։

—Ինձ էլ նոյնպէս է թւում։

—Իսկ եկեղեցին խօ պէտք է ազատ լինի հսկողութիւնից։

—Ի հարկէ, լաւ է որ եկեղեցին լայն ու արձակ տեղի վերայ կառուցւի. այ օրինակ Քամոյեանց եկեղեցին ինչի՞ նման է. ահագին փող է ծախսւում և այնպէս է խեղդւած չորս կողմից, որ ուղղակի վատ է գալի։

—Գեղարւեստական աշխարհում ինչ նորութիւններ կան,—արդեօք Տոլստոյը չափազանցութիւնների չէ՞ դիմում իր կարծիքներում։

—Ո՞ր Տոլստոյը.

—Լև Նիկոլայեվիչը։

—Ես նրան չեմ ճանաչում։

—Ի՞նչպէս—ինչ էք ասում, նա որ Եասնայա Պալեանա է ապրում։

—Ես այն տեղ կոնցերտ չեմ տւել, չեմ եղել, ուրեմն և չեմ ճանաչում։

—Այս րոպէիս ամենալաւ ջութակահարն ով է Ռուսաստանում։

—Ես ջութակի վերայ չեմ երգում։

—Իսկ պիանիստ Իգումնովը, Լևինը Հոֆմանը.

—Ամենալաւը Ռուբինշտէյնն է։

—Դուք ինչ երաժշտական գործիքներ էք սիրում։

—Դուդուկ, զուռնա, քեամանչա, տիպլի-

պիտօ, նազարա, թառ ու դայիրա, ձիանուշն էլ չաւ է։

—Դրանկան ինչ նորութիւններ կան Պետերբուրգում։

—Ոչինչ, Новое Время ամեն օր դուրս է գալիս։

—Իսկ Պետական Դումայում, Սաղաթէլեանին, Մովսէս Անէլեանին ճանաչում էք։

—Ճանաչում եմ։

—Ի՞նչպիսի մարդիկ են, տաղանդաւո՞ր։

—Տաղանդաւոր։

—Բայց և քի՞չ օգտաւէտ,

—Այո, քիչ օգտաւէտ!

—Լաւ կլինի, եթէ մենք հայերս շատ թւով անդամներ ունենանք Դումայում։

—Լաւ կլինի։

—Եթէ մենք կոնսերւատորիա, ֆիլարմոնիկ զալոց և այլն ունենանք, դա ինչպէս է, լաւ կը լինի արդեօք։

—Այո, լաւ կլինի։

—Տաճկական սահմանադրութեան մասին դուք ինչ կարծիք ունէք։

—Ո՞ր սահմանադրութեան։

—Տաճկական։

—Ես առհասարակ սահմանադրութեան վերայ կարծիքներ չունեմ,

—Ի՞նչ էք կարծում, սուլթան Մահամէդը երկար կարող է թագաւորել Բոսֆորում։

—Ո՞ր Բոսֆորում։

—Պոլսում։

—Պոլսո՞ւմ,

—Այո, Պոլսում, Կոստանդինուպոլսում։

—Ես Կոստանդինուպոլիս չեմ եղել։

—Իսկ մեր պրեմիեր Ստոլիպինի դրութիւնը. աջակողմեանները դաւեր էին լարում, չի՞ կարող պատահել, որ նրանք իրենց նպատակներին հասնեն։

—Չի կարող։

—Այդ որտեղից գիտէք։

—Ոչ մի տեղից, հէնց էնպէս։

—Ի՞նչպէս, թ է է ն պ է ս։

—Էնպէս էլի՛, էնպէս. հարցնում ես, ես էլ պատասխանում եմ. բացի դրանից, Տիգրան Նազարեանն էլ էր այդպէս ասում։

—Դրամական տագնապը զգալի՞ է։

—Այո, կոնցերտներին չեն յաճախում։

—Հայկական օպերա եթէ լինի լաւ կը լինի։

—Լաւ կլինի

—Իսկ միջոց ու երգիչներ կը գտնե՞նք,

—Միջոց չգիտեմ, բայց երգիչներ ջուխտը մի շահի կարելի է ճարել։

Ես ուրախացայ, որ մեզանում երգիչներ կարելի է ճարել ջուխտը մի շահի, իսկոյն դուրս վազեցի Ամիրջանի մօտից և ուղղակի եկայ այստեղ—խմբագրատուն, գրելու այս ինտերվիւն, որ մամուլին յանձնենք։

Ինտերվիւէր

## ԿԵԱՆՔԸ ԿՌԻՒ Է

Մանուկ օրերից բաղդի հարուածներն
Ինձնից կորզեցին իմ քնքոյշ սէր-հոգին—
Նրանց փոխարէն անվերջ արկածներն
Իմ մէջ կոփեցին այս ըմբոստ ոգին։

Անդորր անկիւն՝ սիրեցի մաքառ.
Եւ դուրս նետուեցի դէպի զոռ պայքար
Դէմ ճակատագրիս՝ խրոխտ. յուսահատ
Ու կուրծս դարձաւ անուր ժեռոտ քար...

Օ՛, կեանքը՝ կռի՛ւ է, ու կռուն բերք՝
կեանք,
Եւ եռանդ. ով յաղթէ կ՚կայ...
Այդ գիտեն նոյնիսկ երկինքն ու ովկիան,
Ուր ամպ ու աշխ. բեռ մէջս բոլն

Լծից ազատ են, բայց եւ հանապազ
Խիզախ ճակատով շուրջն արհամարհանք,
Արկածախնդիր ու մրրկահագ,
Ելնում են ռազմի, ելնում արշաւանք...

Աշխարհը՝ մարտի է լայն ասպարէզ.—
Ով կռուել գիտէ. թող մեն հիմներով.
Այստմի աւինով. անվան արծիւ պէս՝
Սլանայ այնտեղ, սլանայ բոցերով...

Իսկ քսբուոտ մարդիկ, որ կ՚արհամարհեն
Զարթնել դարերի ննջից ճորտութեան,
Գերի ծնւել են, գերի պէս մարեն՝
Գերի խաւարին, բռնաւորութեան։

Ծոփէդ

## ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

Բարեկազիր մեր ազիզ համշաօն Գասպար Կալատուզովին։

Գասպա՛ր ջան. գրածդ կաղէթներից կերեւնայ օր. դուն ալ ինձ պէս գրագետ չիս կանայ գրի։ Կերեւնայ օր, դուն օր յաշկերտ էիր, անմախիթը աշխրքին յերեսին գրագետ չկար, վարժապետները աշխարաբար ին էգի։ Աւրիկ զարար չունի. Թող Թազագեալգի գիտնականները գրագետ տախտկին իրենց պէս գիտուններուն համար. Ես ու դուն ալ գրինք զուրգեարներուն. մշակներուն. համբալներուն, ղարաչուխայիններուն համար։ Հմը յերեսից ըսել չըլլի. գիտուն մարդու պէս գրիս կը, խելօք բաներ խօսիս կը։ Ցաւում չիս աւրիր թարգմել չիս էգիր, հմը գրածներէդ կերեւնայ օր, յամէն բանից խաբարթին ունիս։ Հալալ է քեզի, օղուլ, գրէ, մեր զարանցիք քու գրածներէդ շատ հազ կէնին կը։

Մտձ. Աս մէկը Գասպարավարի էգաւ։

Մեր քաղքէն, վի՜նծ. շատ վի՜նծ դօջայ դազանմ, զանդին, Ասածու կրակի տէր ատըգըմ յընկաւ խաթարայի մէջ։ Տեղն է ատոր, թէօր հինգ մանէթ տար «Խաթաբալա» առնէր. աս փորձանքի մէջ չէր յընկնիր։

Գիտիք ինչ է էղիր։ Հաջի աղային վրան շատեր մոգոնեցին, թէ 2 մանէթի աղբանքը 5 մանէթի խը ծախիր. լաւը տեսցուցիր խը, գէշերը մուշտարու գլխին խը կապիր։ Ասպէս չէշիտ չէշիտ զուր ու բուխտաններ սարքեցին, գործը սուտը ցկեցին. խեղճ անմեղ հրեշտակին 9 օր նստախտ վճռեցին։

Գասպար ջան, դուն խելացի մարդ ես, դէ բաէ տեսնիմ, էսիկ ատրնձուա բան էլ Հարիֆը հազար մանէթ մարափ է էրիր, ծուռ ու պաս է պահիր, Ցերուսաղէմ ուխտ է գնացիր, հաջի է դառիր, Երիտասարդ գերեզմանը բիլակի վրան գաջիր է, հէչ աստուածը մէջ գողութեան կէնէ կը։

Զաման տարեկան 20 հազար մանէթ գեալիր ունի. ասկու արծթի մէջ լող կուտակը. զարդ չունի, զատուար չունի. հինգ-վեց հոգի ուտող ունի. ալ ինչի՞ պիտի մուշտարուն խաբէ, ու սուդ քաղքին մէջ խայտառակ ըլլի։ Չէ, աղբար, ես չիմ ուտնայ. ասպէս դօջայ Աղան, զանգին Աղան, հաջի Աղան, պերուի գլխի Աղան, խոշոր ատուզ Աղան՝ հէչ ասպէս բան կէնէ կը։ Ես ալ Հաջի-Աղայից շատ ալիշ-վերիշ իմ էրիր. թէ խաբիր է, թէ գէշը լաւ գնով ծախիր է. մեղքը իրեն շլինքը։ Ես ալ ան գունիան Հաջի Աղայի եախան բռնեմ կը, մէկին էրկուս կառնեմ կը։—

Դալալի Մարգար

## ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

1903 թւին յարքունիս գրաւած եկեղեցական կալուածները և փողերը, երբ 1905 թւին գանձատանից վերադարձնում էին Գանձակի հոգևոր կառավարութեանը, այդ փողերի տոկոսները 1800 րուբլին, ճանապարհին էքսպրոպրիացիայի է ենթարկուած եղել մի խումբ անյայտ մարդկանց կողմից։ Այժմս քննութիւնից պարզւում է, որ էքսպրոպրիատորները եղել են շորերը փոխած հոգևորականները։

Իսկ էքսպրոպրիացիան կազմակերպողը և ուղղութիւն տւողը եղել է Թիֆլիսից՝ հնախօսի միջոցաւ...

1800 րուբլին դեռ տոկոսներն է, թէ որքան է մայր գումարը, այդ միայն յայտնի է հոգ. կառավարութիւնից գողացւած փաստաթղթերին։

Մ'ոծակ

## Ա Յ Ս Օ Ր

Դէհ ջերեր ջան, քէֆ արէք,
Դուշմանի աչքը հանէք.
Նոր ածելին սրել եմ,
Ինչ տեղ գնամ, պիտ քերեմ...

Փող կը լցնեմ ուռեցէք,
Մինչև բերանը կուզէք...
Դուշմաններս թող քռնան,
Թող «կօնդակը» մոռանան...

«Գըխնձ բակլէն խաչել եմ»
Մեռելի տուն ճաշել եմ...
Ձեռս ընկած նորընծին
Կը կնքեմ ինչպէս էծին։

Դեռ չեմ հաշւում կորածներ,
Հազար մի գործ, չ՛հասներ...
Էյ, տնաես ջան. գուրս արի
Ծափ եմ տալիս, պար արի,

Փորս՝ փոր չէ—մեծ հոր է,
Սև ծովից էլ շատ խոր է,
Արար աշխարհ շուռ կը տամ,
Մեծ պաս հետը կուլ կը տամ։

«Մեծ կընգակը» մաշել է,
«Ընտրութիւնը» խաշել է...
Դէհ ջերեր ջան. քէֆ արէք,
Դուշմանի աչքը մարէք...

Շատէլ-Արար

## ՍԱՖԻՐԻ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐԻՑ

Մարդս իւր ամբողջ կեանքում գերեզմանափոր է.—12 տարեկան հասակում,—նա թաղում է իւր մշտածիծաղ մանկութիւնը. 18 տարեկան-վարդագոյն պատանեկութիւնը. 20 տարեկան-իւր առաջին սէրը, 30 տարեկան-հաւատը դէպի մարդիկ. 40 տարեկան-իւր յոյսերը. 50 տարեկան-իւր ցանկութիւնները. 60 տարեկան հասակում՝ քիչ-քիչ կորցնում է իւր հինգ զգացութիւնները՝ այն է տեսողութիւնը, լսողութիւնը և այլն։ Եւ այսպէս ուրեմն մարդս շարունակ գերեզման է փորում և դարձեալ երբեք մահւան մասին չի մտածում. հէնց որ տարիքի մասին յիշեցնում են, նա վախենում է, իսկ երբ հարցնում են, «քանի՞ տարեկան էք»՝ նա կարծում է, թէ իրան հարցնում են՝ «Ե՞րբ պիտի պատիւ ունենում ձեր գագաղի ետևից գնալու»։

—

Մա՛ր—կենդանի ապացոյց է այն բանի, որ չը կայ մի մարդ, որի գոյութիւնն անպայման անհրաժեշտ լինէր մեր մոլորակի (երկրի) վրայ։

—

Մարդս երբեք չի ցոյց տալ այնքան անզօրութիւն, որքան ցոյց է տալիս այս չափ ոյժեր երեւան հանելուց յետոյ։

—

Ցաւալի է, որ միայն ստուերն է մարդու իսկական նկարագիր տուողը։

—

Մարդու մասին աւելի շատ են դատողութիւններ անում մարդիկ, քան որևէ պիեսայի մասին։ Պիեսայի վերաբերմամբ նրանք գոնէ մինչև ներկայացման վերջանալը սպասում են, ապա իրանց դիտողութիւններն անում, իսկ երբ խօսքը մարդու մասին է՝ նրա վերջանալուն չեն սպասում։

—

Ով ուզում է մարդուց որևէ բան ստանալ՝ երբեք չը պէտք է դիմէ միայն նրա սրտին, կամ բանականութեանը ջոկ ջոկ, այլ միշտ, թէ մէկին և թէ միւսին միաժամանակ։ Մուրացկանն էլ յաճախ ոչինչ չի ստանում, երբ իւր դիմումը ուղղում է մի հատիկ անցորդի, իսկ երբ անցորդները երկուս են և նա ողորմութիւն է խնդրում, տալիս են՝ իրարից քաշելով։

Սաեդ Մախաթովիչ

## ԳՈՂՍԻՑ ՄԻՆՉԵՒ ԹԻՖԼԻԶ

Սեւաստոպոլ 10 յունիսի 1909 թ.

Պարոն Գասպար՛

Ձեզ ուղարկում էլի, չեզ ուղարկում, յա՛ւ, խօ ես չարս կգանեմ, համա վատութիւնը քեզ կմնայ։ Դու գրել ես, որ նաւ նստեմ, իսկ նաւավարձ կտայ մեր յաղթող կուսակցութեան գործակալը Բաթումում, այդտեղից էլ երկաթուղու տոմսակ կառնի և ինձ կյանձնէ կանդուկտորին Թիֆլիզ բերելու։ յա՛ւ, թէ չփոշմանես, բաս ես էլ ինչ մարդ եմ. ուրեմն ես պէտք է նաւօծ-պլատեծով գամ, հա՛, էլ մասս չես գնում մի հարիւր մանէթի՞, դէ թող էդպէս լինի։

Ես վերջին անգամ նայում եմ այս անտիրաների, այս անհոգիների մայրաքաղաքի վերայ և ուղղակի վազում եմ դէպի նաւը, առանց հիւրանոցն անգամ մտնելու, որպէս զի... օր առաջ կարողանամ իմ սիրելի կովկասցիների հետ տեսնել, ապրել և հարկաւոր դէպքում մեռնել, վասն փառքի և մեծութեան մերս յաղթող և մեծ կուսակցութեան։

Պրաշչայ Սեւաստոպոլ...
Ձեր Արշակ Յարութիւնեան

Նաւի վերայից

11 յունիսի

Ուղիղ ծովի մէջ տեղն ենք. վա՛, էս չափ էլ հրաշալիքներ և Աստծու անեղ խորհուրդ։

Գասպար, ծով տեսած կա՞ս. գիտես թէ ինչ մեծութիւն ունի։ Ես որ ողջամբ գամ Թիֆլիզ, Կուռիսի լճի վրայ պէտք է մի երկու նաւ շինել տամ և միջին ապրեմ ուզածս ատեն։ Լնանկ լաւ կըլլայ կոր։

# ՖԵԼԻԷՏՕՆ

## ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻԶԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Առաջնորդարանի գլխաւոր դահլիճում կարգով կանգնած են Ալ. Քալանթար. բժ. Նաւասարդեան, Համբ. Առաքելեան, Յակոբ Մելիք-Բախտամեան, Սամսոն Յարութիւնեան Գար. Լեռնեան, Ալ. Խատիսեան, Եր-Լալայեան և այլն և այլն։ Սրանցից իւրաքանչիւրը առանձին առանձին մտնում են Վեհի առանձնասենեակը և հետևեալ խօսքերով շնորհաւորում Հայրապետի գալուստը։

Ցերեմոնիմէյստր Համբ. Առաքելեանն անհանգիստ ներս ու դուրս է անում։

Թիֆլիզի հայերի կողմից ներս է մտնում Ալ. Քալանթար,

—Ձերդ Վեհափառութիւն, Թիֆլիզի հայ ազգաբնակչութիւնն ինձ վրայ քաղցր պարտականութիւն դրեց, ներկայանալ Վեհափառութեանդ և ողջունել՝ բարի եկար։ Մենք յոյս ունինք, որ Ձերդ Սրբութեան հովանու տակ՝ պաշտօնական մի քանի կարևոր հարցեր, հարցեր, որոնք վաղուց են առաջացել, բայց դեռևս չեն վճռել, ցանկալի վախճան կը ստանան։ (Դուրս է գնում)։

Համբ. Առաքելեանը նոյնպէս դուրս է գնում և յայտնում։

—Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց հրամայել միւս պատգամաւորութիւնն ընդունել։

Ալեքսանդր Քալանթար,—Համբարձում, Համբարձում, послушай Համբարձում, միւս պատգամաւորութեան կողմից ես պէտք է խօսեմ։

Համբարձում Առաքելեան՝—Դէհ արի խօսիր էլի։

Քալանթարը նորից ներս է մտնում։

—Ձերդ Վեհափառութիւն։

Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութիւնը, ընկերութիւնը որ ունի փառաւոր և կուլտուրական անցեալ, անցեալ, որ բարեյաջող պայմաններով կարելի կը լինէր արդիւնաւէտ դարձնել, ինձ մեծ պատիւ արեց և յանձնարարեց Ձերդ Վեհափառութեան շնորհաւորել գալստեան առթիւ իր ուրախութիւնն արտայայտել. (առջի համբուրում և դուրս է գնում—Համբարձումը նոյնպէս)

Համբ. Առաքելեան.

—Նորին վեհափառութիւնը բարեհաճեց հրամայել հետևեալ պատգամաւորութիւնն ընդունել։

Ալ. Քալանթար.

—Համբարձում, послушай Համբարձում, մէկէլ պատգամաւորութեան կողմից նոյնպէս ես պէտք է խօսեմ։

Համբ. Առաքելեան,

—Դէ էս մէկը թող ուրիշը խօսի. յետոյ էլի դու. պարոն Սամսոն, հերթը ձերն է. (Ներս են գնում Համբ. Առաքելեան և Սամ. Յարութիւնեան։)

Սամս. Յարութիւնեան.

—Վեհափառ Տէր. Թիֆլիզի թեմը ինձ պատիւ արեց և իր պատգամաւորը ընտրեց Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու. ես այդ պատւից շատ շնորհակալ եմ։

Ներկայիս՝ Վեհափառ Տէր. ես և մենք սխալ ճանապարհի վրայ ենք կանգնած, ուստի խնդրում ենք բարի լինէք, որպէս հայր և կարող անձ, ինձ և մեզ այդ սխալ ուղիից յետ կանգնեցնէք, որի համար յայտնում ենք մեր շնորհակալութիւնը։ (Դուրս է գնում)։

Համբ. Առաքելեան ուզում է խօսել.

Տեսնում ես, հոսանքի լեզուն էլ սովրեցի։ Գասպար ջան, կիպօրչխալէն էնենց են ուտում, կարծես էս անտեր նաւի վրայ՝ էլ ուրիշ բան չկայ։

Ես զարմանում եմ, թէ ինչի՞ քաղաքը, կամ մեր Խատիսովը մէ երկու հատ էս թառւր նաւ չեն շինել տալի, Քռի վրայ բանելու։

Էգուց, գիտեմ Բաթում կլինենք։

Գասպար ջան, էն բանը դո՞րթ է. տօ, էդ ինչպէս եղաւ, որ այդպիսի բան պատահեց։ Նալլաթ չար սատանին, եթէ ուրիշը լինէր, խօ մասխարա բան կլինէր։

Ինչպէս արէք, որ Կաթողիկոսի գալու օրը, ես այդտեղ լինեմ, անյարմար է, որ ես Թիֆլիզ չլինեմ։

Ձեր Արշակ III
Դերասան հայոց

Բաթումի մօտ ծովից, նաւի վրայով

12 յունիսի

Երեւում են հեռւում սարեր, սարերի կատարներին անտառներ. իմ աչքերին նոյնպէս երեւում են մեր Թիֆլիզը, Մաղա-Դաւիթը, Ֆունիկուլեօրը Վարանցովի պամեատնիկը, «Խաթաբալի» վիւեսկէն և քուչեկօջներն էլ, Գասպար ջան։

Մօտենում ենք. արդէն քաղաքն էլ մօտենում է նաւին։ Կամաց-կամաց երեւում են տներ, եկեղեցիներ, մարդիկ, կանայք, կառքեր ու շներ.—և ահա մենք Բաթումում ենք։

Էս տեղ, Բաթումում մի քիչ փրթկոն պատահեց, ես էլ չգիտեմ, թէ ո՞նց՝ բայց ես նաւից դուրս թռչելու ջուրն ընկայ։ Աչքիս առաջ, գլխովէր ընկնելու ժամին մտաբերեցի գլխիս եկած-անցածը, քաղաքն ու Մանթաշովը, Մաճկալով Սանդրօն, ու իմ սիրելի Արշակը՝ Մաճկալովի կնքահօրը, դուն քու լուսաճաճանչափայլատակութիւնովը, և մեր ազգի բոլոր փրկիչները։

Համա մէկ էլ տեսայ, որ ցամաքի վրայ եմ և դիրամալա, տուր թէ կուսս, թափ են տալիս ինձ։

Վերջը, Տէրը բարին տայ, աչքերս բացի և ծ զարմանք ու ուրախութիւն, տեսայ մեր աչքի լոյս գ ա ր ա գ ա ւ օ ի ն.—Ну что, братецъ ասաւ. ուրախացայ, լաց եղայ, յետոյ ասի՝

—Էսօր Բաթում զօրօղ, ասի։

—Նաստայաշչի, ասաւ։

Վերկացայ, մէ յաւ լաղաթին պաչեցի ու դէմուզէտը խնդրեցի, որ տանի ինձ մեր կուսակցութեան բիւրօն։

Գասպար ջան, որ ասեմ, գիտեմ կնեղանաս, բիւրօում մարդ չկար, ոչ Ճնտրիկ Աբեղան, ոչ Տէր-Մեսրոպը, ոչ լրագրավաճառ Լեւոնը, ոչ բանկի դիրեկտոր Խուդադովը։

Աստուած կեանք տայ էլի պրիստաւ Ջափարիձէին, մի քիչ մարդավարութիւն ցոյց տուեց, տեսնւեցանք, մի քիչ քէֆ քաշեցինք ու խմում էլ վագզալ եկանք, որտեղ վերջացրի էս նամակը և ուղարկելով քեզ, ինքս մտայ վագոն։

Ահա գալիս եմ Թիֆլիզ, իմ տանջւած ու վաստակած գլուխը հանգստացնելու համար։

Մնամ
Արշակ III դերասան հայոց
(կշարունակւի)
Արտագրեց՝ Պօլէտիկոս

## ՑԵՂԱԳՐԱԿԱՆ

(Նիւթեր «Ազգագրական Հանդ.» համար)

### ЧИСТОКРОВНЫЙ ՋՈՒԿ

Հանրածանօթ Թաթօս-աղա հարուստ վաճառականը, իբրև վերին Ագուլիսի հարազատ զաւակ, մաքուր ջուկ էր։ Նա բոլորովին չէր նմանւում այն քոսոտ ջուկերին, որոնց մասին լուր է տարածւած, իբր թէ ապակէ ամանի մէջ պահւիր են գնում ու դրսից հաց քաղում ուտում։ Նա ընդհակառակն ատելով ատում էր այդ տեսակ ծայրայեղ ժլատներին։

Թաթօսը շատ յաճախ, նոյնիսկ երբեմն ամեն Աստծու օր, ձու էր խաշել տալիս ճաշի համար։ Թէ ինքը և թէ իր ընտանիքը այդ սննդարար բանով էր կերակրւում խաշ ջուրը, որի մէջ ձու էր եփւում, տալիս էր ծառային ու պատւիրում որ հաց բրդէ ուտէ։ Հաւատացնում էր ծառային որ չաղութիւնը հէնց նրա մէջն է։

Մի անգամ նրա միակ որդին ծանր հիւանդացաւ։ Նա իբրև զաւակասէր հայր պատրաստ էր ոչինչ չը խնայել որդուն առողջացնելու համար։ Չէր հաւատում բժիշկներին ու դեղերին, հաւատում էր ամենակարող Աստծուն միմիայն, ուստի վճռեց ամենամեծ զոհաբերութիւն անել։

Չոքեց եկեղեցում, վիզը ծռեց, բազուկները տարածեց ու շշնջաց։

Տէր Ամենակալ Աստւած Արարչամեծ, Խաչնակալ և Ցակորայ, առողջացրու որդուս և ես ամենամեծ զոհաբերութիւն կանեմ։ Կը ծախեմ ձիս, որին սիրում եմ կեանքիս նման և բոլոր փողը կը բաժանեմ աղքատներին։

---

—Նորին Վեհափառութիւնը...

Ալ. Քալանթար.

—Послушай. Համբարձում, հետեւեալ պատգամաւորութեան գլուխը ես եմ. թող որ ես ներս մտնեմ։

Համ. Առաքելեան (գիտելով միւսներին).

—Պարոններ, հետեւեալ պատգամաւորութեան գլուխը պ. Ալէք. Քալանթարն է։

Ներս են մտնում երկուսն էլ։

Ալ. Քալանթար.

—Ձերդ Վեհափառութիւն, «Մշակի» խմբագրութիւնը, որչափ յայտնի պէտք է լինի Ձեզ, որ ունի փառաւոր անցեալ և հիմնւած է անմահ և մեծ հիմնադիր Գրիգոր Արծրունու կողմից, Արծրունու, որ այնչափ աշխատանք գործ դրեց մեր կուլտուրական առաջխաղացութեան պատմութեան մէջ, այո, այդ նոյն խմբագրութիւնը, որի խմբագիրը և խմբագիր հրատարակիչն եմ ես, ինձ վրայ սեղմ պարտք դրեց գալ և Նորին Վեհափառութեան, ազգընտիր քահանայապետից շնորհաւորել գալուստը, այլև հաստատումը այդ բարձր պաշտօնի մէջ շնորհաւորել։ (Երկուսն էլ դուրս են գնում),

Համ. Առաքելեան.

—Նորին Վեհափառութիւնը հաճեց հրամայել, ընդունել հետեւեալ պատգամաւորութեան։

Ալ. Քալանթար.

—Послушай Համբարձում, թող դեռ մէկ ուրիշը խօսի յետոյ ես կը մտնեմ։

Բժ. Նաւասարդեան.

—Աւելի լաւ է, եթէ պ. Քալանթարը խօսի, Տնայնագործականի կողմից։

Սամ. Յարութիւնեան.

—Ես կարծում եմ, որ եթէ ես խօսեմ, աւելի յարմար է։

Մելիք Բախտամեան.

—Բայց դուք ո՞ւմ կողմից։

Սամ. Յարութիւնեան.

—Բարեգործական Ընկերութեան Վարչութեան կողմից։

Ալ. Քալանթար.

—Իսկ ես վերջին ընդհանուր ժողովի կողմից։

(Ներս են մտնում)։

Սամ. Յարութիւնեան.

—Ձերդ Վեհափառութիւն, Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը, ինձ պատւի արեց յանձնարարել Վեհիդ ներկայանալ և աջդ համբուրել և խնդրել Ձեր բարձր հովանու տակ առնել մեր ընկերութիւնը, որ իր ճիւղերը տարածել է Կովկասի համարեա բոլոր տեղերը, քաղաքներն և գիւղերը, դաշտեր ու ձորեր, թոյլ տւէք Վեհափառ, ի դիմաց ընկերութեան վարչութեան ս. աջդ համբուրել։ (չոքում և համբուրում է)։

Ալ. Քալանթար.

—Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր ժողովը, ժողովը որ տեղի ունեցաւ մի քանի օր սրանից առաջ և որը՝ աղմկալից ժամեր անցրեց և սակայն շնորհիւ մեր կուլտուրականութեան առանց միջնադէպերի անցաւ, և որի նախագահ ընտրւելու պատիւը ես ունեցայ, ինձ վրայ պարտք դրեց ներկայանալ Ձերդ Վեհափառութեան և ս. աջդ համբուրելով՝ իր պատրաստականութիւնը յայտնել ծառայելու Ձեզ և հայերիս կուլտուրականութեան։

(Դուրս են գնում միմեանցից երկուսն էլ)։

Համբ. Առաքելեան.

—Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց հրամայել ներս ընդունել հետեւեալ պատգամաւորութեան։

Ալ. Քալանթար.

—Послушай. Համբարձում, թոյլ տուր ես

Նա ունէր մի հիմնալի ձի, որ ձեռք էր բերել պատահմամբ շատ էժան գնով, երեք հարիւր ռուբլով։

Աստուած լսեց հաւատացեալի աղերսանքը, խղճաց, գթաց ու առողջացրեց հիւանդին։

Թաթոսը խօսքի տէր մարդ էր։ Կիրակի առաւօտ դուրս տարաւ բազար իր ձին ծախելու։ Դուրս տարաւ նոյնպէս իրանց կատուն։

—Թաթոս-աղա, ծախո՞ւմ ես ձիդ։

—Այո։

—Ի՞նչ։ ես ուզում։

—Քսան կոպէկ-մէկ խօսք, պակաս չի կարելի։

Յօսոյը ենթադրելով, որ Թաթոսը խելագարուել է, ուզեց անպատճառ օգտուել հանգամանքից։ Սա նոյնպէս զոկ էր։

—Ահա քեզ քսան կոպէկ, տուր ձին։

—Բայց ձիս մենակ չեմ ծախում, կատուից չեմ կարող բաժանել։

—Կատուին ինչքա՞ն ես գնահատում։

—Հինգ հարիւր ռուբլի։

—Յօսեցին, սակարկեցին ու վերջը միմեանց ձեռքը սեղմելով, գործը վերջացրին։

Քսան կոպէկ ձի ու չորս հարիւր յիսուն ռուբլի կատուն։

Ծախողը գոհ էր, առնողը նոյնպէս գոհ էր։

Թաթոս աղան, նոյն օրն և եթ ճշտութեամբ կատարեց իր ուխտը։ Ձիու գինը, քսան կոպէկ ամբողջովին բաժանեց աղքատներին։

Գ. Բաշ.

***

Ցայսերես անուշաբոյր փունջը ձեռիս,
Կեանքի գիշերւայ խաւարում քայլելով,
Դիմում եմ վաղւայ արշալոյսներին.
Բայց աւա՜ղ, նրա վարդ դէմքի փոխարէն,
Որին փունջս մատուցանել եմ ցանկանում,
Մութ աղջամուղջի մէջ իմ երփներանգ ծաղկէ փնջիս
Գերեզմանն եմ փորած գտնում...
Ի՞նչ բերեմ քեզ գոհ, ո՜ դաժան կեանք,
Որ ինձ միշտ գիշերւայ խաւարումն ես պատեցնում...,
Չէ, ծաղիկների հոտը քեզ դիւր չէ գալիս.
Եւ ես կ'ծխեմ քեզ համար արիւնս շիթ-շիթ
Ծաղկոցիս դուռը փակած,
Սուրը մէջքիս գալիս եմ առա,
Ու արշալոյսը սրով պիտի դուրս հանեմ
Ո՛վ դու հէգ կեանք։

Սաֆի

## ԿԵԱՆՔԸ ՄԱՀ Է

—Գիտե՞ս, մէշէցի, ես կապացուցեմ, որ կեանքը հաւասար է մահւան, ուրիշ խօսքով կեանքը մահ է.

—Այսինքն ինչպէ՞ս, պ. Գեամբրօզադեան, ես չեմ հասկանում.

—Հապա տես,—կիսակենդան, կամ կիսամեռ, երկուսն էլ նոյն իմաստը չունե՞ն.

—Այո.

—Դէ, ալգեբրայից յայտնի է, որ—եթէ հաւասարութիւնից հանենք հաւասար մասեր, նա չի փոխւի. ուրեմն—կիսակենդան հաւասար է կիսամեռի. հանենք երկուսից էլ կիսա—մասերը, կլինի կենդան հաւասար է մեռ—ին, այսինքն կեանքը հաւասար է մահւան, ուրիշ խօսքով կեանքը մահ է։

Մէշէցի

## ՈՐՔԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՍ

Աղջիկ.—Ուզիդն ասած, ինձ համար ոչ մի նշանակութիւն չունի, թէ ազան ինչ տեսակ մարդ է. ես որոշել եմ միայն հարուստ և լաւ ապահով ազի հետ ամուսնանալ։ Ի՞նչքան կարողութիւն ունես։

Տղայ.—35 հազար ռուբլի եթէ կանխիկ բանկում ունենամ, լաւ կուլի՞։ Երեք այգիներից եթէ տարեկան տասը հազար զուտ արդիւնք ունենամ, լաւ կուլի՞։ 250 թոխլի ոչխար, 20 կթի կով, մի այդքան էլ կթի գոմէշ եթէ լինի, լաւ կուլի՞։ Եթէ առաջին փողոցի վրայ մի հատ չորս յարկանի լաւ տուն ունենանք, լաւ Է՞։

Աղջիկ.—Լաւ է։

Պսակւելուց յետոյ, աղջիկը երբ գնում է սկեսրանց տունը, տեսնում է որ ազան աղքատի մէկն է և բացի չորս հատ մի յարկանի սենեակներից, ոչինչ կարողութիւն չունի,

Կին.—Ո՞րն է ձեր չորս յարկանի տները, ոչխարն ու այգին, կովն ու գոմէշը, բանկի փողերը։

Մարդ.—Չորս մի յարկանի սենեակները եթէ իրար գլխին դնենք, կը դառնայ չորս յարկանի տուն։ Իսկ գալով 35 հազար ռուբլի փողին, ոչխարի հոտին, կովին ու գոմէշին— ես ասել եմ, եթէ լինի լաւ կուլի՞, չեմ ասել թէ ունեմ։

Օզըգեալըղի

մանեմ—Տնայնագործականի կողմից խօսեմ։

Համ. Առաքելեան.

—Դէ թող մէկ ուրիշը խօսի, յետոյ էլի դուն ներս արի։ Գ. Երւանդ Լալայեան համեցէք։

Երւանդ Լալաեան.

—Գիտէք, ես ուզում եմ խօսել, բայց խոկալէս քաշւում եմ։

Ալ. Քալանթար.

—Ինչի ես քաշւում, այդ տեղ ինչ կայ, սովորական ֆրազներ. կուզէք ձեր կողմիցն էլ ես խօսեմ.—послушай Համբարձում Երւանդը քաշւում է, լաւ չէ, եթէ Ազգագրականի կողմից էլ ես խօսեմ, իսկ Երւանդը և տիկին Մարտիրոսեանը թող Վեհի աջը առնեն.

(Մտնում են չորսով)։

Ալ. Քալանթար.

—Ձերդ Վեհափառութիւն, Հայոց Ազգագրական Ընկերութիւնը, որը արդէն դեր ունի կատարելու մեր կուլտուրականութեան պատմութեան մէջ, մեզ վրայ պարտք դրեց՝ գալ և Ձերդ Վեհափառութեան սուրբ աջը համբուրել, ցանկանալով, որ դուք հաստատ հիմքերի վրայ դնէք մեր ընկերութեան հարցը։

(Համբուրում են աջը և դուրս գնում)։

Համ. Առաքելեան.

—Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց հրամայել ընդունել հետևեալ պատգամաւորութեան։

Սամ. Յարութինեան.

—Թոյլ տւէք պարոններ, ես ներս մտնեմ. ես պէտք է խօսեմ, փաստաբանների միութեան կողմից, դաշնակցիների կողմից, Դաւթեան բացեկլիք գիւղատնտեսական դպրոցի կողմից, յետոյ մի խումբ մարդկանց կողմից։

Ալ. Քալանթար.

—Դաւթեանի, դաշնակցիների և գիւղատնտեսական դպրոցի կողմից, աւելի լաւ է ես խօսեմ։

Սամ. Յարութինեան.

—Իսկ ինձ թւում է, որ աւելի լաւ է ես խօսեմ։

Ալ. Քալանթար.

—Այդ դէպքում ես կը խօսեմ Տնայնագործական ընկերութեան կողմից։

(Նորից ներս է մտնում)։

—Ձերդ Վեհափառութիւն, Թիֆլիզում մենք հիմնել ենք Տնայնագործական մի ընկերութիւն, որի նպատակն է ձեռարւեստներ զարգացնել հայ գիւղերում և այդպիսով զարկ տալ մեր գիւղացիութեան կուլտուրականութեան—ահա այդ ընկերութիւնը ինձ վրայ պարտք դրեց, խնդրել Ձերդ Վեհափառութեան օրհնութիւնը։

(Դուրս է գնում Հ. Առաքելեանի հետ)

Համ. Առաքելեան.

—Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց հրամայել, ընդունել հետևեալ պատգամաւորութեան։

Ալ. Քալանթար,

—Համբարձում, послушай Համբարձում, այսօր ես զարգեցի, լաւ չէ՞, եթէ այսօր ընդունելութիւնը դադարեցնենք և վաղը նորից գանք ներկայանալու, ես դեռ ես քանի քանի ընկերութիւնների, խմբագրութիւնների և այլոց կողմից պարտք ունիմ գալ և ներկայանալ Վեհափառ Կաթողիկոսին։

Սամ. Յարութինեան.

—Ոչինչ, վաղն էլ վատ չէ որ գանք և ներկայանանք, ես էլ պէտք է խօսեմ մի քանի ընկերութիւնների և խմբերի կողմից, հաւանական է այսօր եւ մի քանի խմբակցութիւններ կը գտնեմ, որոնցից նոյնպէս հաւատարմագիր կառնեմ խօսելու համար։

Համ. Առաքելեան.

—Պարոններ, Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց հրամայել, այսօր այլևս ոչ ոքի չընդունել, վաղը ժամի տասից ընդունելութիւնը կը սկսւի։

Բոլորը ցրւում են, բայց չեն դուրս գընում վեհարանից։

Եռ-Եմ

## ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾ ԳՈՂԸ

(Ռուսերէնից)

Վարժապետի մօտ մի օր գող մտաւ.
(Խեղճը այդ գիշեր ժողով էր գնացել),
Երկար թափառեց՝ երկար ման եկաւ,
Բայց գողի համար ոչինչ չէր մնացել.
Պահարան, կոմօդ, ամեն տեղ դատարկ,
Լոկ մի քանի թերթ նա այնտեղ տեսաւ.
Պարտէզի դուռը թէեւ դրսից փակ,
Բայց գողը ներսում ոչինչ չգտաւ...
Ու խիստ չարացած՝
Թքեց ու ասաց.
—Դրողը տանի, խայտառակութիւն...
Ես դեռ այսպէս բան երբէք չեմ տեսած.
Ոչի՞նչ չգտնել փակած սենեակում...
Ա՜խ դու խորամանկ, դուռը կողպել ես,
Որ անմեղ մարդկանց մեղքի մէջ գցե՞ս։

Ս. Բագէն

## ՄԱՆՐ-ՄՈՒՆՐ

—Տիկին Սրբուհին—ուղղակի սուրբ է։

—Ճշմարիտ է, նա իր ամուսնուն էլ կարողացաւ դարձնել կատարեալ նահատակ։

—

Ես միայնակ նստած էի վագոնի առանձին բաժանմունքում և ծխում էի։

Ներս մտաւ կոնդուկտորը։ Քաղաքավարի, բայց վճռականապէս նա դիմեց ինձ.

—Ներեցէք, այստեղ կարելի է ծխել, բայց միայն միւս ճամբորդների թոյլտուութեամբ։

—Բայց ես մենակ եմ։

—Դրա համար էլ, պարոն, դուք պիտի սպասէք, մինչև ուրիշ ճամբորդներ գան և իրանց համաձայնութիւնն յայտնեն։

## ՆԻԷՐ ՄԱՀՄԷԴ-ԱԼԻ ՇԱՀԻՆ ԻԶՕ-ԽԱՆԻՑ

Դու ինձ Թաւրիզ պահանջեցիր
Սաթթար խանին պատժելու...
Եւ խոստացար Թաւրիզումը
Ինձ դատաւոր անելու։
Երբ լսեցի ես այդ լուրը,
Մակուն թողի հեռացայ՝
Շրջապատուած քուրդ գնդերով
Աջի Չային մօտեցայ.
Հրահանգ տուի գնդերին,
Որ Թաւրիզը գրաւեն.
Թնդանօթի ռումբերով
Պատնէշները կործանեն։
Յառաջ անցայ ես խմբերով
Գրաւեցի գիւղերը,
Դունչխա տուին, յետ դարձրին
Սաթթարն ու Բաղըրը։
Շուրջս փռուեց դիակներով,
Ու միայնակ մնացի.
Մութ անկիւններ որոնելով
Կեանքս հազիւ փրկեցի։
Քո ուղարկած ուղերձովը
Դու իմ տունը քանդեցիր
Քո ֆէլու-ֆանդ խօսքերովը
Սուրբ երդումդ դրժեցիր։
Ես երդւում եմ այս օրւանից
Լինել ազգին ցաւակից,
Նրա վէրքին դարման անել
Սուրբ ղուրանի պատւէրից։

Լեւոն Մակ.

## ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

Ութսունական թւականների երկրորդ կիսին, Մինաս Չերազը թուրք կառավարութեան հալածանքից ազատւելու համար, Պոլսից փախչում է արտասահման։ Համիդեան ռէժիմը կամենալով ստիպել Մինաս Չերազին, որ ինքն իրան մատնէ կառավարութեան ձեռքը, տանջանքների է ենթարկում Պոլսում մնացած նրա ընտանիքին, մօրը, եղբօրը, հարսին ու երեխաներին։

Շատ շատ խուզարկութիւններ է լինում եղբօր բնակարանում։

Մի անգամ էլ խուզարկելիս գտնում են, համարեա աղտոտ ցնցոտիների մէջ Մինաս Չերազի լուսանկարը։

Այդ առթիւ ձերբակալում են այդ ժամանակ տանը եղած հարսին։

Երբ սրան տանում են ժանդարմերիական վարչութիւն, խորամանկ տիկինը խնդրում է քննիչին լուսանկարը գէթ ցոյց չտալ ամուսնուն, որովհետև սիրականինն է և եթէ ամուսինն այդ բանն իմանայ, անխուսափելի մահ կսպասնայ իրեն.

—Եթէ այդպէս է, ուրախութեամբ կրակի ճարակ կանեմ, ասում է ջենտլմէն թուրք քննիչը և լուսանկարը դցում է վառարանի մէջ, այրում։




## ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

ԱՆԳԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
Ն. Բօկլ
Համառ. Նոտովիչ, թարգ. Վ. Աջամեան
հրատ. Գ. Գալստեանի
Գինն է 75 կոպ.

—

ՀԱՅԻ ՆՈՐ ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ
Դրական ժողովածու Դր. Զալխուշեանի խմբագրութեամբ. ի նպաստ տուժող Զէյթունցիների. Նոր Նախիջեւան 1909 թ. գինն է 2 ռուբ.

—

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ
Կազմեցին: Ղ. Աղայեան, Ա. Ահարոնեան, Յով. Թումանեան, Վ. Փափազեան
Գինն է 2 ր.

—

В. Вартанянъ
Л. Н. ТОЛСТОЙ и ЛЕОНИДЪ АНДРЕЕВЪ
Баку
Цѣна 20 коп.

—

Ալէքսանդր Արէլեան
ԱՆԿՈՉ ՀԻՒՐ
Պիէս մի գործողութեամբ. Թիֆլիզ տպ. «Պրոգրես» 1909 թ.
Գինն է 25 կոպ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

**ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ**

Ցանկանում է տեղաւորուել դասեր ունենալ գիմնազիայի մինչև V դասարանի կուրսից.
Դիմել՝ «Թատրոն»ի խմբագրութեանը
Ս. Դոստեանց

ԴՐ. ՇՈՒՇԱՆԻԿ ԽԻԹԱՐԵԱՆԸ

Ամբողջ ամառուայ ընթացքում մնալով Թիֆլիզ՝ իր սեփական տանը, որ գտնւում է Տէր-Ղուկասովսկայա փող. № 4. յանձն է առնում պատրաստել արական և իգական բոլոր միջնակարգ դպրոցների համար։
Ընդունում է նաև գիշերօթիկներ։
Անձամբ տեսնել կարելի է առ. 9—11 և եր. 5—7.

ԹԷՅԻ ՀԱՄԱՐ ՊԷՋԷՆԻՅԷ
ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ
ԷՅՆԵՄ.

Ս. ՍՈՂՈՄԱՆԵԱՆԻ ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆԸ
(Фото-Цинкографія)
ՏԵՂԱՓՈԽՒԵԼ է Պուշկինսկի փողոց, Պուշկինսկի Պասաժ.

Լոյս տեսաւ և վաճառւում է

ՀԱՑԻ ԿՏՈՐ
ՁԷՅԹՈՒՆՑՈՒՆ

Գրական ժողովածու Դր. Զալխուշեանի խմբագրութեամբ. ի նպաստ սոված Զէյթունցիների.

Գինն է 2 ռուբլի

Պահեստը Դր. Զալխուշեանի մօտ
Ростовъ н/Д. Б. Садовая № 174.






ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
„ՊՐՕՎՕԴՆԻԿ"
ԱՐՏՕՆԻԱԾ
Ամենայայտ Աշխարհում

ԱՆՊԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, չքնեղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից



ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
ՊՐՕՎՕԴՆԻԿ




1888

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մ Ի Ւ Ն Ի Ե Ւ Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ (կլոուն)



Ես չեմ, նա չեմ, նա չեմ, միայն ինձ նմաններ են բոլոր նրանք, որ ազգային գործիչներ են։

ՅԱԿՈԲ ՄԵԼԻՔ-ԲԱԽՏԱՄԵԱՆԸ (չարժ)



Կաթող. ընդունել. կարգադրիչ յանձնաժողովի բազմաչարչար անդամ։

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԻՉԸ



«Մշակի» խմբագրութիւնը մի աւտոմոբիլ է խոստացել, ով կը հնարէ մի գործիք, որով կարողանային միաժամանակ չորս հինգ տեղ գործ կատարել։ Օրինակ սեղանի վերայ ամրացրած կոճակները սեղմելով, միաժամանակ կարողանային մի տեղ յօդուածներ թխել, մի ուրիշ տեղ քէֆ անել, բաղնիքներում ճաշեր ուտել և պաշտօնական ճաշերից անմասն չմնալ։

## ՎԵՀԱՓԱՌԻ ՄՈՒՏՔԸ ԹԻՖԼԻԶ



Ալեքսանդրեան այգու մօտ Վեհ. ամպհովանու տակ.

—Ваше превосходительство, մեր ազգերը որ խօսում են, թէ մենք, ոչ գեներալներս անպէտք ենք, սխալւում չե՞ն. բայց մենք ազգի համար հարկաւոր մարդիկ չենք։

—Ասում են էլի, բայց ո՞վ է հարկաւորը. էն շոգին արևի տակ, ազգի խաչերը շալկէր, էս բալդախինը կը բռնէ՞ր.

—Ի հարկէ, մենք էլ ազգի համար ենք աշխատում, բայց։

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԵՑԱՁԻ ԿԱՌՔԸ



Շնորհիւ անշնորհք և տգէտ կարգադրիչների, կաթողիկոսական կառքը յիշեցնում էր գիւղեր երթևեկող օմնիբուսներին, լծւած զառամեալ և քոսոտ ձիերով ու կեղտոտ պատառոտուն շորեր հագած ձիավարներով